ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՍԱՐԱՏԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ С. САРАТАК

REPUBLIC OF ARMENIA SARATAK COMMUNITY OF SHIRAK REGION

_24_/_12_/_2015թվական

ՀՀ Շիրակի մարզպետ

պարոն Ֆ. Ցոլակյանին

Հարգելի պարոն Ցոլակյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 20-Ա,21-Ա, 22-Ն,23,24-Ն և 25-Ա որոշումները ։

Հարգանքով

Համայնքի ղեկավար՝ Մ. Ղրգոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20 -Ա

15 դեկտեմբերի 2015թվական　　　　　　　　　　　　　　　　　　գ. Սարատակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի , 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի *ավագանին*

*որոշում է*

1)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 42.33% -ի չափով՝ 280000դրամ (երկու հարյուր ութսուն հազար դրամ )

2) Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափ սահմանելու մասին թիվ 20-Ա որոշումը

*Ավագանու անդամներ*

Վ. Ջատիկյան　　　կողմ

Հ. Մնացյան　　　կողմ

Ս. Ղզրոյան　　　կողմ

Ս. Հովհաննիսյան　　　կողմ

Համայնքի ղեկավար՝　　　Մ Ղրզոյան

15 դեկտեմբերի 2015թվական　　　　　　　　　　　　　　　　　　գ. Սարատակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

<<15>> դեկտեմբերի 2015 թվական գյուղ Սարատակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ՍԱՐԱՏԱԿԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 21 –Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարաատկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 8, <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը՝ 11 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակի գյուղապետարանի աշխատակազմի և <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակի գյուղապետարանի աշխատակազմի և <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2015 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Վ. Զատիկյան կողմ

Ց. Մնացյան կողմ

Մ. Ղզրոյան կողմ

Ս. Յովհաննիսյան կողմ

Յամայնքի ղեկավար՝ Մ Ղզրոյան

«15» դեկտեմբերի 2015 թվական
գ. Սարատակ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարատակ համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ __21_-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաս-տիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 3 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 95000 | 99.93 | 1 | 95000 | 95000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ-հաշվապահ (3.1-1) | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ-հաշվապահ (3.3-1) | 1 | 78000 | 27.85 | 1 | 78000 | 78000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 6 | Գրադարանավար | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| 7 | Հավաքարար | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| 8 | Պահակ | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| Ընդամենը | | 8 | 673400 | | 8 | 673400 | 673400 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՂՐՋՈՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարատակ համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ __21_-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաս-տիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 3 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 95000 | 99.93 | 1 | 95000 | 95000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ-հաշվապահ (3.1-1) | 1 | 94000 | 33.57 | 1 | 94000 | 94000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ-հաշվապահ (3.3-1) | 1 | 78000 | 27.85 | 1 | 78000 | 78000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 6 | Գրադարանավար | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| 7 | Հավաքարար | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| 8 | Պահակ | 1 | 72800 | 26 | 1 | 72800 | 72800 |
| Ընդամենը | | 8 | 673400 | | 8 | 673400 | 673400 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՂՐՁՈՅԱՆ

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարատակ համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ 21 -Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՍԱՐԱՏԱԿԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 82000 | - | 1 | 82000 | 82000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 72752 | - | 1 | 72752 | 72752 |
| 3 | Դաստիարակ | 1 | 69510 | - | 1.12 | 77851 | 77851 |
| 4 | Դաստիարակ | 1 | 65000 | | 1.12 | 72800 | 72800 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 72752 | - | 1 | 72752 | 72752 |
| 6 | Դաստիարակի օգնական | 1 | 72752 | | 1 | 72752 | 72752 |
| 7 | Խոհարար | 1 | 72752 | - | 1 | 72752 | 72752 |
| 8 | Գործավար | 1 | 77904 | - | 1 | 77904 | 77904 |
| 9 | Երաժշտության դաստիարակ | 1 | 77904 | | 1 | 77904 | 77904 |
| 10 | Տնտեսվար | 1 | 72752 | | 1 | 72752 | 72752 |
| 11 | Բակապահ | 1 | 72752 | - | 1 | 72752 | 72752 |
| | Ընդամենը | 11 | 808830 | - | 11.24 | 824971 | 824971 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՂՈՒԶՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22 -Ն

15 դեկտեմբերի 2015թվական                                         գ. Սարատակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի , <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի *ավագանին*

*որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի 2016 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

*Ավագանու անդամներ*

Վ. Զատիկյան կողմ

Հ. Մնացյան կողմ

Մ. Ղզրոյան կողմ

Ս. Հովհաննիսյան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ Ղրզոյան

15 դեկտեմբերի 2015թվական                                         գ. Սարատակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23

15 դեկտեմբեր 2015թվական                                                                                    գ. Սարատակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19 -րդ կետի դրույթներով *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանին*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի Սարատակի նախակրթարան ՀՈԱԿ-ի կողմից գանձվող ծնողական վճարի դրույքաչափը սահմանել 4000 դրամ (չորս հազար )դրամ յուրաքանչյուր երեխայի համար :

*Ավագանու անդամներ*

Վ. Զատիկյան կողմ ...............................

Հ. Մնացյան կողմ ...............................

Մ. Ղզրոյան կողմ ...............................

Ս. Հովհաննիսյան կողմ ...............................

Համայնքի ղեկավար՝ Մ Ղրզոյան

15 դեկտեմբերի 2015թվական                                                                                    գյուղ Սարատակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ
# ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 24-Ն

<< 15 >> դեկտեմբերի 2015թվական գյուղ Սարատակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 25-Ն որոշումը:

Սարատակ համայնքի ավագանու անդամներ՝

Վահրամ Ջատիկյան կողմ ---------------------------,

Մերուժան Ղզրոյան կողմ ---------------------------,

Հովսեփ Մնացյան կողմ ---------------------------,

Սլավիկ Հովհաննիսյան կողմ ---------------------------,

Սարատակ համայնքի ղեկավար՝ Մ.Ղզրոյան

15դեկտեմբեր 2015թվական գ.Սարատակ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 23 -Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

միչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքերի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երկու հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ վեց հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4) մեկ ամսվա համար՝ տասը հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում հինգ հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

13.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հարյուր հազար դրամ:

14. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝հինգ միլիոն դրամ,

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝յոթ միլիոն դրամ,

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝տասը միլիոն դրամ:

# ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման,շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝տասը հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝երկու հազար դրամ:

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ,

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանհինգ դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հինգ հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՂՐՋՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ա

15դեկտեմբերի 2015թվական　　　　　　　　　　　　　　　　　　　　գ.Սարատակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ավագանին

*որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

*Ավագանու անդամներ*

Վ. Զատիկյան - կողմ

Մ. Ղզրոյան - կողմ

Հ. Մնացյան - կողմ

Ս. Հովհաննիսյան - կողմ

Համայնքի ղեկավար`　　　　　　　　Մ. Ղրզոյան

15դեկտեմբերի 2015թվական　　　　　　　　　　　　　　　　　　　　գ.Սարատակ

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Շիրակի մարզի Սարատակի համայնքի ավագանու*
*2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 25-Ա որոշման*

| Հ/Հ | Հիմնական միջոցի անվանումը | Ձեռքբերման տարին | Քանակը | Արժեքը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | .Դարինդարա ամառանոց 1.286868 | | 1 | 1.286868 |
| 2 | . Հացահատիկի պահեստ 1.654692 վաճառված է | | 1 | 1.654692 |
| 3 | Էլ աղաց 1.654692 | | 1 | 1.654692 |
| 4 | Արհեստանոց 1.654692 | | 1 | 1.654692 |
| 5 | Կալի պարիսպ 1.654692 | | 1 | 1.654692 |
| 6 | Ավտոմեքենայի զարաժ 1.654692 | | | 1.654692 |
| 7 | Ակումբ 1. (6900150 300տեղ) | | | 1. (6900150 300տեղ) |
| 8 | Հացահատիկի պահեստ 462399 | | | 462399 |
| 9 | Տրակտորի պարկ 1791512 | | | 1791512 |
| 10 | Գազի գիծ 3588321 | | | 3588321 |
| 11 | Ջրագիծ | | | |
| 12 | Գերեզմանոցի պարիսպ 3142800 | | | 3142800 |
| 13 | Գյուղապետարանի գրասենյակ | | | 3462000 |
| | | | | |
| 14 | Գյուղի փողոցներ 4.5կմ | | | |
| 15 | Գրասեղան 4 – 8380 | | | |
| 16 | Դիմադիր 1—1769 | | | |
| 17 | Գրապահարան- 1 –301 | | | |
| 18 | Բազկաթոռ – 1-273 | | | |
| 19 | Կաս երկաթից – 3-260 | | | |
| 20 | Պահարան - 1-136 | | | |
| 21 | Կախիչ 2 - 142 | | | |
| 22 | Աթոռ –4 | | | |
| 23 | Համակարգիչ 1 450000 | | | 1 450000 |
| 24 | Սեղան - 2 – 65000 | | | 65000 |
| 25 | Աթոռ –4 | | | |
| 26 | Սեղան –1 | | | |
| 27 | Պահարան 1 | | | |
| 28 | Թրթուրավոր տրակտոր Տ703 -2 – 303519 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | չկա | | | |
| 29 | Հացահատիկահավաք կոմբայն Սկ5 - 1154998 վաճառված | | | |
| 30 | Հացահատիկային շարքացան Ց 3 ու | | | |
| 31 | Հեռուստացույց | | 1 | 190000 |
| 32 | Ալեհվաք | | 1 | 10000 |
| 33 | Աթոռներ | | 10 | 70000 |
| 34 | Ղեկավրի սեղան | | 1 | 130000 |
| 35 | Օֆիսային աթոռ | | 1 | 70000 |
| 36 | զգեստապահարան | | 1 | 80000 |
| 37 | Պատի նկար | | 5 | 90000 |

Համայնքի ղեկավար`     Մ. Ղրզոյան